«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ ՀԵՊ

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Բաբախանյան

Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ս. Ավանյանի անվ. համար 4 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1: Առակի սահմանումը, կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը 5

Գլուխ 2: Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը 9

Եզրակացություն 14

Օգտագործված գրականություն ցանկ .....,.....15

Ներածություն

Մարդկային հասարակության քաղաքակրթական ամենավաղ էտապներից դեռևս ծագել է սերունդներին դաստիարակություն և կրթություն տալու կարևորագույն առաքելությունը, որպես կուտակված արժեքավոր փորձի և գիտելիքի՝ հաջորդ սերունդներին փոխանցման անփոխարինելի միջոց: Հասարակակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ կատարելագործվել է այդ գործընթացը և ամեն նոր դարաշրջան ավելացրել իր ձեռքբերումները: Ինչպես ճիշտ կազմակերպել սերունդների կրթությունն ու դաստիարակությունը, որպեսզի այն լինի համակարգված, շարունակական և որ, ամենակարևորն է, նպատակային և արդյունավետ՝ այս հիմնախնդիրը որպես առաջնահերթություն մշտապես եղել ավագ սերնդի մտահոգության առարկան: Ի՞նչ սովորեցնել , ի՞նչպես սովորեցնել , ի՞նչի համար սովորեցնել՝ այս առանցքային հարցադրումները բոլոր ժամանակներում մտահոգել են կրթության գործի պատասխանատուներին, թեև որ դրանց երբեք էլ միանաշանակ և վերջնական պատասխան հնարավոր չի եղել տալ կախված այն բանից, թե ինչ զարգացման է հասել հասարակությունը, ինչպես են փոխվել կացութաձևերը և արժեքները, և թե ինչ նոր հետաքրքրություններ ու մարտահրավերներ են դրանք բերել:

Եթե սկզբում կրթությունն ու դաստիարակությունը կրել են անհատական կամ ընտանեկան բնույթ, ապա հետագայում ստեղծվել են հատուկ կառույցներ , մշակվել՝ տարբեր մեթոդներ ու ձևեր, ընդլայնվել է կրթադաստիարակչական գործընթացի տարածականությունն ու հասարակական ընդգրկվածությունը : Սակայն մի օրինաչափություն միշտ մնացել է նույնը՝ այն , որ կրթադաստիարակչական ոլորտը պիտի միշտ լինի ժամանակին համընթաց: Այսօրվա աշխարհը նման չէ երեկվանին և մտածել, թե ինչ ռազմավարություն որ կար երեկ կրթության և դաստիարակության մեջ այսօր կգործի՝ սխալ է: Կրթադաստիարակչական ոլորտը անընդհատ զարգացող և փոփոխվող պրոցես է, ինչպես որ զարգացող և փոփոխվող է աշխարհը: Կրթակարգերը բարեփոխելն ու թարմացնելը , նոր մեթոդաբանությամբ և տեսակետներով հագեցնելը ամենօրյա պահանջ է, որ կարիք ունի շահագրգիռ մարդկանց հետևողական և սրտացավ աշխատանքի, մանավանդ այն մարդկանց և մասնագետների, ովքեր աշխատում են շահառու խմբերի, այն է՝ հանրակրթական հաստատություններում և հատակապես դպրոցներում կրթություն

ստացող սովորողների հետ: Այսօրվա աշակերտին այլևս դոգմատիկ գիտելիքով և մեթոդաբանությամբ հնարավոր չէ բավարարել կամ դաստիարակել: Այսօրվա աշակերտին առաջարկվող գիտելիքը պետք է լինի կիրառականության առումով շատ պատճառաբանված, հիմնավորված և մատուցվի արդիական և հետաքրքիր մեթոդաբանությամբ: **Սա հիմնախնդիր է, որ ունի գլոբալ բնույթ և մշտական հետազոտության ու նորարարությունների կարիք է զգում:** Այլապես ուսուցման արդյունավետության վրա հույս դնել հնարավոր չի լինի: Չէ՞ որ գիտելիքի ձեռքբերման աղբյուրները այլևս մեկը կամ երկուսը չեն: Դրանք բազմաթիվ են և բազմազան, ու հաճախ աշակերտը ինքն ավելի մեծ տեղեկույթ կարող է ձեռք բերել, քան ուսուցիչը: **Նշանակում է , որ հենց մենք ՝ ուսուցիչներս՝ առաջին հերթին մեր բնագավառում անընդհատ ինքնակրթվելու, ինչու չէ նաև կրթադաստիարակչական և հետազոտական բնույթի ուսումնասիրություններ կատարելու, տեսակետ հայտնելու և նպատակային ու արդյունավետ թարմացումներ իրագործելու կարիք և անհրաժեշտություն ունենք:** Պարփակվել միայն սեփական տեղեկույթով և գիտելիքով ՝այլևս արդիական չէ: Անհրաժեշտ է նաև գիտելիքն ու փորձը կիսել այլոց հետ և նրանցից ևս ստանալ նոր փորձ և գիտելիք: Ուրեմն ինչպես անել, որ ոչ միայն տեղեկույթ ձեռք բերելու, ունեցած գիտելիքը խիստ նպատակային ու արդյունավետ օգտագործելու և կրթության պատասխանատուներին իրենց դժվարին աշխատանքում օգնելու կամ աջակցելու հարցերում մենք՝ ուսուցիչներս էլ կարողանանք մեր փոքրիկ նպաստը բերել ունեցած տեսակետներով և փորձով: Այս հիմնավորումով էլ ես ընտրեցի իմ թեման՝ 《Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը》, որի հետազոտության արդյունքում կփորձեմ գտնել որևէ նոր մոտեցում, նոր տեսակետ , որը իր բնույթով լինի նորարարություն և ավելի արդիական տեսանկյունից լուսաբանի առաջին հայացքից շատ հետազոտված և ավարտուն թվացող այս թեման: **Նաև կփորձեմ իմ նոր տեսակետը տարածել և կիսել ընկերներիս հետ ոչ միայն իմ հնարավոր հավանական լավ փորձը իրենց փոխանցելու, այլև նրանցից այդ առումով կարծիքներ լսելու և իմ առաջիկա պրակտիկայում կիրառելու համար:**

Գլուխ 1

Առակի սահմանումը, կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը

Ինչպես նշեցինք, ներկայումս կրթակարգերի մշակման գործը շատ ավելի բարդ է և բազմաբովանդակ, որովհետև աշխարհը փոխվում է օրեցօր, առաջանում են նոր մարտահրավերներ, և կրթության արդիականացումն ու նոր ռազմավարություն մշակելը երբեմն դառնում են օրվա խնդիր: Բայց պետք է ընդունել նաև, որ շատ հաճախ նորարարությունները կատարվում են լավագույն ավանդույթների և փորձի հիման վրա: Նման արդյունավետ ձեռնարկումներից է նաև ներկա կրթադաստիա-բակչական համակարգերում ի թիվս շատ արդիական մեթոդների, նաև առակի՝ որպես դաստիարակության փորձված մեթոդի կիրառումը:

Իսկ ինչ է առակը, ինչ ծագում ունի և ինչու է հատակապես դա օգտագործվում դաստիարակության մեջ:

Առակը[1] (առ ակն՝ աչքի առաջ) դա բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները: Առակը որպես այդպիսին առաջացել է քաղաքակրթական վաղ էտապներից և ժամանակի հետ կատարելա-գործվել թե բովանդակային, և թե նպատակների առումով: Եթե սկզբում այն եղել է հիմնականում փոքրածավալ պատմողական ստեղծագործություն, ապա հետագայում գրվել են նաև չափածո առակներ:

Առակի փոքրածավալությունը և սեղմ շարադրանքը ըստ իս այն ամենակարևոր արժանիքն է արդիականության տեսանկյունից (և ոչ միայն), որ ընթերցողը կամ լսողը նախ չի ձանձրանա, ապա նաև զբաղվածության պատճառով ստիպված չի լինի տրամադրելու երկար ժամանակ (քիչ ժամանակի տրամադրմամբ հնարավոր կլինի հասնել բովանդակության յուրացմանը): Սա առավել տեղային է հատակապես այն

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%AF

դասապրոցեսների համար, երբ կարճ ժամանակը արդյունավետ օգտագործելու և դրված նպատակին հասնելու խնդիր կա:

Բովանդակային առումով առակը նույնպես շատ կիրառելի է՝ գրվածքի ենթա-տեքստը այլաբանության միջոցով ավելի հասկանալի դարձնելու համար: Իրականում, ուղիղ ասված խոսքը երբեմն լավ չի ամրապնդվում կամ շատ շուտ մոռացվում է: Իսկ առակի այլաբանորեն գործող կերպարները, հերոսները և նրանց ուսուցումները շատ երկար են մնում մարդու հիշողության մեջ: Բացի այդ առակի հեղինակները այն՝ ինչը չեն կարողացել ասել ուղիղ, ասել են առակի միջոցով: Նրանք որպես կերպարներ ընտրել են կենդանիների, բույսեր, իրեր, երկնային մարմիններ, քանի որ չեն կարողացել (անթույլատրելի էր կամ վախեցել են պատժից) կոնկրետ տվյալ մարդկային կերպարներին ուղղել իրենց քննադատական խոսքը: Այս նպատակադրմամբ՝ առակները սկսել են կիրառվել դեռևս անտիկ աշխարհում: Սակայն եթե սկզբում դրանք բացառապես մարդկային արատները ծաղրելու համար են կիրառվել, ապա հետագայում ձեռք են բերել նաև խրատական նշանակություն: Այսինքն առակի ծաղրական բովանդակությանը սկսել է ավելանալ նաև բարոյախոսական կամ բարոյախրատական բովանդակությունը: Երկու դեպքում էլ առակի հերոսը մարդն է, ուղղակի առաջին դեպքում միայն ծաղրվում են նրա արատները, կյանքի հոռի և բացասական գծերը, իսկ երկրորդ դեպքում ոչ միայն դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը, այլև գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը, **դրանով իսկ խրատելով և մոտիվացնելով մարդուն դեպի այլ արժեքներ:** Այսինքն ինչ որ պահից սկսած արդեն առակը ձեռք է բերում նաև խրատական կամ դաստիարակչական արժեք: Հետաքրքիր է, որ մեծածավալ գործերը երբեմն այնքան հասարակական պահանջվածություն չեն ունեցել դաստիարակչական առումով, որքան առակները: Առակը սիրված և ընդունված էր ժողովրդի կողմից, իսկ առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր:

Իսկ հետաքրքիր է, ո՞րն էր առակի գրավչության գաղտնիքը: Հավանաբար այն, որ մարդ արարածը միշտ էլ սիրել է սովորել կենդանի օրինակներով, այսինքն ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Առակն օգնել է մարդուն իրական կյանքում, գնահատելով լավն ու վատը, ավելի հեշտ ու ճիշտ ապրել. ահա այս առումով էլ

առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես խրատ տվող գործեր:

Բովանդակային առումով առակը պարտադիր ունենում է գաղափար և խրատական եզրակացություն: Խրատական եզրակացությունը սովորաբար կամ լինում է սկզբում, կամ վերջում: **Թեև ընդունված է կարծել, որ խրատական եզրակացությունը դա հիմնականում հեղինակի վերաբերմունքն ու դիրքորոշումն է, սակայն մեծիմասամբ դա համընկնում է նաև հասարակական հավաքական կարծիքի և ընթերցողների կարծիքի հետ:** Կան առակներ, որ երբեմն այնքան կարճ ու պարզ են, որ այլևս եզրակացության կամ հավելյալ մեկնաբանման կարիք չունեն, գաղափարը անմիջապես հասկացվում է, ընկալվում և տպավորվում:

Իմ հետազոտական աշխատանքը գրելիս, փորձել եմ հասկանալ և արժևորել նաև այն տեսակետը, թե ինչ հիմնավորումով և որ ժամանակներից սկսած է առակը ներգրավվել կրթական համակարգ և կիրառվել դաստիարակության գործընթացում: Այս առումով բավական է նայել արդիական լեզվով ասած հետադարձ կապին և հնարավոր կլինի հասկանալ՝ հիմնավորումը հենց առակի հասարակական պահանջվածությունն էր և հասկացվածությունը: Բոլորն էին սիրում առակ, մեծ մասի վրա էր առակի ազդեցությունը մեծ, շատերն էին ուղղակի դաստիարակվում առակով: Սրանից լավ ցուցիչ հիմնավորման համար դժվար թէ գտնվի: Եթե հասարակությունը դաստիարակվում է առակով, ուրեմն ինչու այն չմտցնել նաև կրթական հաստատութ-յուններ՝ մատաղ սերնդի դաստիարակության նպատակով: Հատկանշական է, որ գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն[2] իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին քերականության և ճարտասանության հետ նաև սովորեցնել առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Բայց տրամաբանական է, որ բացի մեկնաբաններ դառնալը, աշակերտների հիմնական մասը նաև կկրթվեր և կդաստիարակվեր առակների ուսուցմամբ: Ու եթե հետո իրենք դառնային ուսուցիչներ կամ ուսուցչապետեր, նույն արժեքավոր փորձառությունը կկիրառեին նաև իրենց գործունեության մեջ, ինչն իրավմամբ այդպես էլ եղել է: Դրա վառ վկայությունն են 12-13-րդ դարերում նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու, ապա նաև հետագայում առակագրության մեջ և կրթական

[2] Գրիգոր Մագիստրոս Ղևոնի ավագի - Վիքիպեդիա ազատ հանրագիտարան (wikipedia.org)

հաստատություններում հայ նշանավոր առակագիրների և մանկավարժների ծավալած գործունեությունը։

Հիմա հիմնավորմանը նայենք արդիականության տեսանկյունից։ Անվիճելի փաստ է, որ վաղ ժամանակներից կրթական համակարգերում ընդգրկվել են այնպիսի ծրագրեր, որոնք ակադեմիական գիտելիքի հետ միասին պարտադիր պարունակել են նաև դաստիարակության տարրեր, որովհետև դրանք առանց մեկը մյուսի անհնար է պատկերացնել։ Այդ լավագույն փորձառությունը կատարելագործվելով կիրառվել է միշտ։ Ճիշտ է, թեև այդ գրրծընթացները զուգահեռաբար իրականացվել են նաև ընտանիքում, սակայն գերակշիռ ծանրաբեռնվածությունը մնացել է կրթական հաստատությունների՝ մասնավորապես դպրոցների վրա։ Սա է այն հիմնավորումը, որ ներկայումս էլ չափորոշիչներ և ծրագրեր կազմելիս, ուսումնական բնագավառներ մշակելիս կրթության պատասխանատուները առաջնորդվում են այն տեսլականով, որ կրթական ծրագրերը անպայման լինեն նաև դաստիարակող։ Իսկ դաստիարակչա-կան բաղադրիչը ինքը իր հերթին պիտի լինի հիմնավորված, փորձով ապացուցված, չափելի և տեսանելի արդյունքներով։ Առակներով դաստիարակելու գործընթացի էությունը հենց այդպիսին է.

1. հիմնավորված
2. փորձով ապացուցված
3. չափելի
4. տեսանելի արդյունքներով։

Ուրեմն՝ առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել սովորողի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով։

Գլուխ 2

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Իսկ ինչու՞ հենց Աստվածաշնչյան առակները։ Ի՞նչ դաստիարակող ներուժ ունեն դրանք իրենց մեջ։

Դեռևս մինչև Հիսուս Քրիստոսի ծնվելը, Հին Կտակարանում մարգարեները ևս կիրառել են այլաբանությամբ մարդկանց դաստիարակելու, խրատելու միջոցը։ Այսինքն Աստծո ներշնչմամբ գրված այդ խոսքերից կարելի է ենթադրել, որ դեռևս իր Որդու աշխարհ գալուց առաջ էլ, Աստված մարգարեների միջոցով մարդկանց խրատելու համար ընտրել է առակներով ուսուցանելու ձևը, ավելին՝ որոշել է, որ իր Որդին նույնպես պիտի ուսուցանի առակների միջոցով։ Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցանելու այս մեթոդը։

Բայց ի տարբերություն մյուս առակների Աստվածաշնչյան առակները հեքիաթային կամ առասպելական պատմություններ չեն՝ դրանք վերցված են մարդկանց կյանքից և առօրյա կենցաղից։ Իսկ այդ առակների հերոսները ոչ թե խոսող կենդանիներ են, թռչող գազաններ կամ խոսող թռչուններ, այլ իրական մարդիկ։ Սա թերևս Աստվա-ծաշնչյան առակների ամենաառանցքային արժանիքն է ՀԵՊ դասաժամերին ուսուցումն ու դաստիարակությունը մատչելի, իրական, առօրեական ձևով իրակա-նացնելու համար։

Անցնենք կոնկրետ օրինակներով Հիսուս Քրիստոսի ուսուցումների և առակների դաստիարակչական նշանակությունը մեկնաբանելուն։ Սկսենք **<<Սերմնացանի առակը>>** թեմայից, որն ուսուցումներից առաջիններից մեկն էր և աշակերտները այն շատ մեծ սիրով են սովորում։ Նախ ամենակարևոր համեմատականը որ տարվում է առակի և առօրյա կյանքի միջև, դա սերմնացանի, որպես հող մշակող և ցորեն ցանողի աշխատանքի արժևորումն է (աշխատանքային և աշխատասիրության դաստիարակում)։ Չէ՞ որ ցորենից է ստացվում մեր հանապազօրյա հացը, առանց որի կյանքն անհնարին է, այսինքն, ապրելու, հաց վաստակելու համար պիտի աշխատել, հող մշակել, որ շատ պատվաբեր է և պատահական չէ, որ Հիսուս իրեն հենց սերմնացանի հետ է համեմատում։

Փոխաբերական իմաստով առօրյայում էլ առանց աստծո խոսքի անհնար է ապրել կամ ավելի շուտ անհնար է ճիշտ ապրել: Հատկանշական է, որ այս գաղափարին հանգում են հենց իրենք՝ սովորողները: Այնուհետև արժևորվում են ցորենն ու հացը որպես սրբություններ, ինչպես որ սուրբ են Աստծո խոսքերը: Ինչպես չի կարելի վատ վարվել հացի հետ, նմանապես և Աստծո խոսքերի հետ: Ճանապարհի, ապառաժ քարի և փշոտ ու քարքարոտ հողի գաղափարները վերլուծելիս ևս սովորողները հանդես են բերում հստակ դիրքորոշում .

չի կարելի անուշադրության մատնել բարի խոսքն ու խրատը և տեղ բացել չար

ազդեցության համար

ճանապարհի

չ ի կպտել ի վորձությունների առջև թուլանալ ապպ և հոգին ապառաժ դպծնել , որ բպտի խոսքն ու խրատը չ ծլ ապծակեն

ապառաժ քար

սեստք է սիրտը միշտմաքուր պտեել քպտերից ու վշերից , որ դրանք չ խեղդեն Աստծո խոսքը

փշոտ ու քարոտ հող

Եվ ի վերջո, պարարտ հողը, որ առակի գաղափարական մեխն է:

սիրտը միշտմաքուր պտեել **պպտպտհողի** նման , որ Աստծո խոսքերը ծլ ապծակեն և բերք տան՝ մեկի դիմաց երեսուն, վպեսուն, հպյ ուր

Այսինքն առօրեականության տեսանկյունից դաստիարակող վերջնարդյունք գաղափարը մաքուր սրտի և ծլարձակող բարության, Աստծո խոսքը ընկալելու և պահպանելու գաղափարն է: Պարարտ հողի օրինակով Հիսուս Քրիստոսուսուցանում և դաստիարակում է անաղարտ հոգու գաղափարը, ուր Աստծո մեկ բարի խոսքը դառնում է երեսուն բարիք, վաթսուն բարիք, հարյուր և ավելի բարիքներ: Իսկ բարիքն ու բարությունը քրիստոնեական կենսակերպի առանցքային բաղադրիչներից են: Սովորողները առակի ուսուցումից հետո իրենց կյանքում մեծ տեղ են հատկացնում բարի կամեցողությանը և բարիք գործելուն, ինչը կրկնվելու դեպքում կարող է դառնալ բնավորություն և կենսակերպ:

Բարիքի և բարի գործերի գաղափարը ավելի զարգացող տեսանկյունից է դիտարկվում **<<Որոմների առակում>>**: Այս դեպքում արդեն ազարակատիրոջ աշակերտներն են (մշակներ) Աստծո խոսքը տեղ հասցնողները, սակայն նրանց աշխատանքը չարը փորձում է փչացնել որոմով: Սովորողները իրենք ևս անմիջապես որոմը համեմատում են չար ու վատ ազդեցության հետ, որը անխուսափելիորեն շրջապատում է մեզ և մարդու կյանքի ինչ որ էտապից (մանկությունից պատանեկության անցման շրջան) սկսում է սողոսկել մեր սրտի և գիտակցության մեջ: Անշուշտ Աստված մեզ պաշտպանում է չարից, ինչպես որ ազարակատերը չթույլատրեց որոմները քաշելով փչացնել ցորենի մեկ հասկ անգամ: Բայց կա նաև յուրաքանչյուրի՝ իր արածին արժանի հատուցում ստանալու գաղափարը (որոմը կայրվի, ցորենը կամբարվի): Սա արդիականության տեսանկյունից անչափ կարևոր գաղափար է և ուսուցանում է պատասխանատվություն կրել սեփական արարքների համար, կամենալ և գործել բարին ու ստանալ նույնը: Բայց հետաքրքիր է նաև աստվածային ամենակարողության տեսանկյունից չարերին անմիջապես չպատժելու Աստծո մեծահոգության գաղափարի ընկալումը: Եթե սովորողները սկզբում կտրուկ քայլերի կողմնակից են, ապա ընթացքում՝ գիտակցելով, որ չարերի պատժվելուց բարիներն էլ վիշտ կամ նեղություն կկրեն, դառնում են ավելի հանդուրժող և հավասարակշռված: Խիստ դաստիարակչական է նաև վերջնարդյունք գաղափարը, որ բոլորին տրված է զղջալու և ուղղվելու հնարավորությունը, ինչը մոտիվացնում է սովորողներին անկախ կատարած վատ արարքից՝ զղջալ և փոխվել:

Վատ արարքի համար զղջալու և զղջացողին ներելու տեսանկյունից, ուղղակի անփոխարինելի է **<<Մոլորյալ որդու վերադարձը>>** առակի դաստիարակչական նշանակությունը: Առակի առաջին տողերից արդեն պարզ է դառնում, որ բոլորս էլ

սխալական ենք, և ոչ ոք ապահովագրված չէ կյանքում ինչ որ պահի սխալվելու, ինչպես որ հարուստի կրտսեր որդին: Սովորողները իրենց անմիջապես պատկերացնում են այդ դերում և պնդում, թե իրենք ժառանգության իրենց բաժինը չէին ուզի և հեռանային: Մի մասը պնդում է , որ եթե հեռանար էլ, ապա նոր վայրերում աշխատանք կգտներ և միջոցները կներդներ, քան կվատներ դրանք ցոփ ու շվայտ կյանքի ու վայելքների մեջ: Հետաքրքիր է, որ սովորողները իրենք են իրավիճակներ առաջադրում և լուծումներ գտնում: Իրականում, հնարավոր է որ հետագայում որոշները ապրեն այդ կյանքով, սակայն սովորողների մեծ մասը արդեն որոշակիորեն գնահատում է այն ռիսկերը, ինչի միջով անցավ մոլորյալ տղան: Շատ դաստիարակչական է փորձությունների միջոցով մոլորյալի զղջման գործընթացը: Ունեցվածքը վատնեց, օտարության մեջ մնաց մեն մենակ, զվարճանքների ժամանակ նրան ընկերացածները թողեցին և հեռացան, ստիպված ինքն աշխատանք գտավ, և ոչ ավել, և ոչ պակաս ուրիշ ազարակատիրոջ խոզեր սկսեց պահել: Ինչի մասին է այս ամենը: Միայն պատժի՞: Ո՛չ, ընդհակառակը: Ոչ թե պատժի, այլ այն հնարավորության մասին, որ սխալվելուց հետո հնարավոր է անցնել, զղջալ և կատարելապես փոխվել: Սովորողները շատ լավ են արժևորում զղջալով փոխվելու հնարավորությունը, այլապես բոլորս մեղք գործելուց հետո, դրանցից ազատվելու ճանապարհ չէինք տեսնի և ավելի կթաղվեինք այդ մեղքերի բեռի տակ: Առակից աշակերտները սովորում են նաև ընկերասիրություն՝ աչքի առաջ ունենալով մոլորյալ որդու ընկերների օրինակը, ովքեր տղայի կողքին էին դրամ ունեցած ժամանակ, իսկ երբ սննկացավ՝ թողեցին և հեռացան: Եվ ի վերջո առակի վերջնարդյունք գաղափարը, երբ հոր ներման օրինակով ուսուցանվում և դաստիարակվում է զղջացողին ներելու գաղափարը: Անշուշտ մոլորյալ որդու մեղքը մեծ էր՝ նա վատնել էր հայրական ունեցվածքը, լքել հարազատներին: Հայրը կարող էր և չներել: Բայց հոր ներումով ոչ միայն ցույց էր տրվում Աստվածային ներողամտության ողջ շռայլությունը, այլև սերմանվում էր ներողամտություն բոլոր կարծր սրտերի համար, ինչպես որ էր զայրացած ավագ եղբոր սիրտը:

Դաստիարակչական առակների շարքից է նաև իսկական ընկերության մասին <<**Բարի սամարացու առակը**>>: Առակի խրատական գաղափարը գտնելու համար բավական է միայն դասանյութի ուսուցումից հետո m-աձև աղյուսակի կազմումը և սովորողներն իրենք են ուղղորդված գործնական աշխատանքի փուլում համեմատում հրեա հոգևորականին,

տաճարի պաշտոնյային, օտարական սամարացուն, ու սահմանում, թե ով է իսկական բարեկամը և արժևորում իսկական ընկերությունը։



Առակը դաստիարակում է լինել իսկական ընկեր ոչ թե ճանաչումով կամ պարծենկոտ խոսքով, այլ գործով, լինել ընկերոջ կողքին և աջակցել նրան ոչ միայն ուրախության, այլև, և՛ առաջին հերթին, նեղության և դժվարության ժամանակ։ Ճանապարհորդը միշտ իրեն բարեկամ և ընկեր է կարծել հրեա հոգևորականին ու տաճարի պաշտոնյային, այնինչ նրանք շրջանցեցին ճանապարհը միայնակ ու անօգնական թողեցին իրեն։ Մինչդեռ օտարական սամարացին դրսևորեց իսկական գթասրտություն, խնամեց և հոգաց ճանապարհորդի կարիքները։ Առակն ուսուցանում և դաստիարակում է գթասրտություն, որը նույնպես քրիստոնեական ապրելակերպի կարևոր բաղադրիչներ։

Անշուշտ դաստիարակչական առակների շարքը շատ երկար կարելի է թվարկել, բայց փորձեմ սահմանափակվել դրանցից ևս երկուսը ներկայացնելով, որոնք դերախաղով ուսուցման դեպքում առանձնահատուկ հաջողված վերջնարդյունք են ունենում։ Ամենամեծ նվերի կամ այրի կնոջ երկու լումայի ուսուցումով մենք արժևորում ենք ամբողջ հոգով ու սրտով Աստծուն սիրելու գաղափարը։ Հասկանալի է, որ Աստծուն մեր դրամները պետք չեն, և առակում ամբողջ ունեցածը նվիրել նշանակում է մեր ողջ սերը նվիրել Աստծուն։ Իսկ փարիսեցու և մաքսավորի առակի ուսուցումով մենք համեմատում ենք Աստծուն ուղղված աղոթքի ձևերը, կամ ինքնագովեստով և պարծենկոտությամբ, կամ համեստորեն և սեփական մեղքի գիտակցումով ու ներում ստանալու ակնկալիքով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ընդհանրացնելով աշխատանքս, փորձեմ հիմնավորված գաղափար-ներով ներկայացնել այն եզրահանգումները, որ ունեցա իմ հետազոտական աշխատանքը գրելիս։

Նախ աշխատանքից պարզ դարձավ, որ անվիճելի իրողություն է առակների, և հատկապես Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը։ Դա ապացուցվել է դարերի փորձառությամբ՝ մարդը սիրում է սովորել օրինակներից։

Աստվածաշնչյան առակների կրթական ծրագրերի մեջ ներառելը որ միայն ցանակալի է, այլև պարտադիր։ Աշակերտները դրանք սիրում են և ջանասիրաբար սովորում ու դաս քաղում։ Աստվածաշնչյան առակները օգնում են աշակերտին զարգացնել կարողունակությունները, որը արդի կրթության առաջնահերթություններից է։ Սովորողի մոտ զարգանում են լեզվական գրագիտության, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, թվային և մեդիագրագիտության կարողունակությունները։

Աստվածաշնչյան առակների ուսուցումը ռիսկեր չի պարունակում։ Դրանք հեշտ են, մատչելի և իրագործելի։ Երբեմն տխուր են, երբեմն զվարճալի, բայց շատ հետաքրքիր են, օգտակար և արդյունավետ, իրար փոխլրացնող են և շարունակող։

Աստվածաշնչյան առակների ուսուցմամբ ապահովվում է կապը այլ առարկաների հետ։ Սա շատ կարևոր է ինտեգրված դասեր կազմակերպելու տեսանկյունից և ապահովում է կարողունակություններով ուսուցման գործընթացը։

Եվ վերջապես արդիականության տեսանկյունից՝ Աստվածաշնչյան առակները երբեք չեն հնանում, քանզի նրանց ուսուցանած և դաստիարակած գաղափարներն ու հոգևոր բարոյական արժեքները մարդկությանը անհրաժեշտ են այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի հենց ինքը մարդկությունն ու բանականությունը, որպես Աստվածային արարչության բացառիկ արժեքներ երկիր մոլորակի վրա։

Մնում է միայն ինքներս լինենք լավ ուսուցանողներ և մեր աշակերտների հոգիներում ցանենք միայն բարի սերմեր, դրանցից երեսունը, վաթսունը, հարյուրը և էլ ավելին ստանալու լավագույն ականկալիքով։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- **Աղբյուր բացյալ (Ավետարանական առակների մեկնությունը), Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2008**
- **Առակներն ուսուցանում են, Կազմող՝ Հովհաննես Սարկավագ Գալստյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2014**
- **Հայոց Եկեղեցու Պատմություն, 5-րդ դասարանի դասագիրք, Տիգրան Մեծ Հրատարակչություն ՓԲԸ, Երևան, 2019**
- **Հայոց Եկեղեցու Պատմություն, Ուսուցչի ձեռնարկ 5-6-րդ դասարաններ, Տիգրան Մեծ Հրատարակչություն ՓԲԸ, Երևան, 2014**
- **Նոր կտակարան, Արեւելահայերէն նոր թարգմանութիին համեմատութեամբ յունարէն բնագրերի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1992**
- **https://hy.wikipedia.org**